ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/10

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Փայլք» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Մ. Յավրումյանի (լիազորագիր՝ տրված 31.01.2019թ.)

Քննելով Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար կեցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Փայլք» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. ներկայացված և 24.01.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/10 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Փայլք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Փայլք» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 24.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին 26.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Փայլք» ՍՊԸ-ն և ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 26.12.2018թ. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն՝ 75 000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած հայտը մերժվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված

եզրակացության համաձայն՝ «Փայլք» ՍՊԸ-ն 26.12.2018թ. դրությամբ (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 75 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերությունը հայտնել է, որ վերջինիս մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Սակայն, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «Փայլք» ՍՊԸ-ն ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 26.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 26.12.2018թ. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Փայլք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Փայլք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 31.01.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Տաշիրի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 31.01.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Տաշիրի համայնքապետարանի կողմից Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար կեցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.12.2018թ. հայտ է ներկայացրել «Փայլք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով «Փայլք» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 09.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Փայլք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 75 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Փայլք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Փայլք» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված

տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Տաշիրի համայնքապետարանի կողմից Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար կեցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.12.2018թ. հայտ է ներկայացրել «Փայլք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով «Փայլք» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 27.12.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Փայլք» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 09.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Փայլք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 75 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Փայլք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 26.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված

գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 26.12.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

«Փայլք» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.01.2019թ. տրված թիվ 42 տեղեկանքը, համաձայն որի 27.12.2018թ. դրությամբ Ընկերության մոտ արձանագրված 75 000 ՀՀ դրամի պարտավորությունը դրոշմանիշային վճարի գծով է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով 26.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում է, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 26.12.2018թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Սույն հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Փայլք» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 10.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Փայլք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**